Ս. ՅԱԿՈՎԲԵԱՆՑ ՎԱՆՈՒՑ ԳՈՐԾԵՐԸ.

Տարւոյս Օգոստոսի 29ին Երուսաղէմայ սուրբ Յակովբեանց վանուց Պատրիարք Տ. Եսայի Արքազան Արքեպիսկոպոս հանգեաւ ի Տէր. Միաբանութիւնը ժողով գումարելով Սեպտեմբերի 5ին ըստ 27. որդ. յօդուածոյ միաբանութեան ներքին կանոնագրի՝ կատարեց պատրիարքի տեղակալի ընտրութիւնը, յետ այնորիկ նոյն Սեպտեմբերի 30ին կազմեց եօթնանուն ընտրելեաց ցանկը և Հոկտեմբերի 1ին կազմելով երից ընտրելեաց ցանկը՝ Հոկտեմբերի 4ին տեղեկագրով ստորագրութեամբ Նախագահի միաբանական ընդհանուր ժողովոյ պատրիարքական տեղակալ Տ. Երեմիա և Ատենադպիր Տ. Աստուածատուր Եպիսկոպոսաց առաջարկեց Կ. Պօլսոյ Հայոց Ազգային ժողովին՝ ընտրելեաց միջից պատրիարք ընտրել։

Պատրիարքի ընտրութեան յանկայեալ Ազգ. ժողովոյ երկու նիստերը ի ցաւ սրտի ազգայնոց՝ ապարդիւն անցան, թերևս երրորդ գումարմամբ Ազգային ժողովը մի կողմ դնելով ս մենայն նկատումն յաջողի ընտրել պատրիարք. որովհետև միաբանութեան տեղեկագիրը ըստ ամենայնի օրինական կարգաւ պատրաստուած լինելով, ոչինչ թէութիւն չէ առաջացնում՝ Պատրիարքի ընտրութեան գործը շուտով առաջ վարելու։ Հրատարակելով Ս. Երուսաղէմայ միաբանական ժողովոյ պատրիարքական ընտրութեան համար տեղեկագիրը, յոյս ունենք շուտով աւետել և ընտրեալ պատրիարքի անունը։

Երուսաղէմայ Սուրբ Յակովբեանց վանուց մէջ պատրիարքից յետոյ երկրորդ անձը Լուսարարապետն է. բարեբաղդաբար Լուսարարապետ ընտրուած է Տ. Սահակ Նորապսակ Եպիսկոպոս Խապայեան որ յայտնի է Ռուսաստանեայցս։

Ըստ սովորութեան՝ Լուսարարապետը ընտրվում է ցմահ։ Եկեղեցական կարգաց և Թանգարանին վերակացու լինելով իրաւամբ հսկողի պաշտօնն ունենալով անփոփոխ և առաջին անդամն է վանական խորհրդոյ։

Ըստ սովորութեան նորընտիր Լուսարարապետը պատրիարքի առաջնորդութեամբ վանական խորհրդոյ և միաբանութեան այլ անդամոց հետ գնում է Սուրբ Յակովբեանց տաճարը. Թանգարանի բանալին դրուած է լինում Ս. Գլխադրի վերայ. Պատրիարքը պատշաճաւոր բանախօսութեամբ եկեղեցական զարդուց և այլ բոլոր

թանկագին ոսկասուց տէր, հաշուառեա և հաշուառու ցոյց տա-
լով Ս. Յակոբեանց՝ առաջարկումէ հաւատարմութեան երդմամբ՝
Ս. Գլխագրի վերայից վեր առնել բանալին, պատուիրելով ոչ ոքի չը
թողուլ թանգարան մտնել։ Լուսարարապետը ի ծունկս խոնարհեալ՝ հաւատարմութեան երդմամբ համբուրումէ Ս. Գլխագիրը և բանալին վեր է առնում Գլխագրի վերայից։ Ապա նոյն ինքն Պատրիարքը «Պահպանիչ» աղօթքով օրհնումէ ու շնորհաւորում Նորընտիր Լուսարարապետին, շնորհաւորումեն և ներկայ եղեալքն. բայի Լուսարարապետից՝ բոլորը դուրս են գնում, իսկ Լուսարարապետը իւր նախորդից յետոյ առաջին անգամ բայ անելով թանգարանի նախագուռը՝ փառումէ թանգարանի նախագահի Սուրբ Մինասին յատկացեալ մշտավառ կանթեղը, որ շիջած էլլինում նախորդի մահուամբ, բայ է անում և բուն թանգարանի դուռը նկատելու իրեղէնները։

Աղօթենք առ Աստուած, որ այս նուիրական պաշտօնը փառաւոր կացուցանէ Նորընտիր Լուսարարապետ Տ. Սահակ եպիսկոպոս Խապայեան հաւատարմութեամբ և իմաստութեամբ։

—

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Մկրտչեան-Ընկեր Ս. Յակոբեանց վանք

Վանք

Պապրկեարեան Ընդարձակ-Ընկեր Ս. Երուսաղէմ։

ՄԱՏՈՒՑԵԱԼ ԱՌ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՆ

—

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր

Նախագահ Ազգային Երեսփ. Ժողովոյ Հայոց Թուրքիոյ։

Միաբանական Ընդհ. Ժողովս յետ կատարման Եօթնօրեայ պաշտամանց և հոգեհանգստեան իւր երջանկայիշատակ Նախագահին Տ. Եսայեայ Հոգելոյս Ս. Պատրիարքի, ի 5-ն Սեպտեմբերի գումարուելով (Նիստ Ե) Ձեր Բարձր Սրբազնութեան և Ազգ. Ժողովոց միխիթարական հեռագրոց և յայտնած վշտակցութեանց մասին՝ երախտագիտութիւն արտայայտել է յետոյ, ըստ որմնագրութեան 27-րդ Յօդուածոյ Կանոնագրի Միաբանութեանս՝ Պատրիարքական Տեղակալի ընտրութիւնն կատարեց գաղտնի քուէից

բացարձակ առաւելութեամբ, զոր անմիջապէս Սեպտ. 5 թուակիր հեռագրաւ հաղորդելով Ձեր Բարձր Սրբազնութեան՝ վաւերացումն ընդունեց Ձեր Սրբազնութեան Սեպտեմբեր 12 պաշտօնական հեռագրաւն։

Ցետ այնորիկ Միաբանական Ընդհ. Ժողովս, որ յօրէ վշտաւորիթ մահուան Ս. Պատրիարք Հօրն՝ կէտ առ կէտ հետեւած էր Կանոնագրի այս մասին վերաբերեալ որամադրութեանց նկատողութեան առնելով ս. Աթոռոյս ներկայ տագնապալից վիճակը և Պատրիարքական ընտրութեան երկարաձգման վտանգաւոր հետեւանքը, անհրաժեշտ դատեց կարելի եղածին չափ փութացնել Պատրիարքական ընտրելեաց քուէարկութիւնը. ուստի յ30-ն Սեպտեմբերի (Նիսան 2) գումարուեցաւ՝ իւր ամբողջ 46 անդամներէն՝ 26-ի ներկայութիւն և անձամբ ներկայ չգտնուողներէն 9 անդամոց քուէներն ունենալով։

Միաբանական Ընդհ. Ժողովս, յիշեալ նատին մէջ նախապէս Ձեր Բարձր Սրբազնութեան Սեպտ. 5 և 217 թիւ պաշտօնագիրն շնորհակալութեամբ ընթերցաւ, որով կրկնելով Հոգելոյս Ս. Պատրիարքի վշտաւորիթ մահուան առթիւ ազգովին եղած թախծութիւնն՝ կը յորդորէիք ըստ Միաբանական Կանոնագրի՝ ամեն բան կանոնաւորութեամբ կատարել և փութացնել Պատրիարքական ընտրութիւնն։ Եւ ապա Միաբանութեան Կանոնագրի՝ Պատրիարքական ընտրութեան վերաբերեալ 29-րդ յօդուածն յատենի Ժողովոյ ընթեռնելով, քուէարկութիւնն կատարուեցաւ և առաւելագոյն քուէ ստացող անուններէն քուէից առաւելութեան կարգաւ եօթն անձինք որոշուելով Ա—Ա՛Ջ ԳՈ—ԳՈՒՆ—ԷՕՆԷ+ԷՆ ԸՆԴԷԼԷՑ պատրաստուեցաւ, որ է հետեւեալն՝

Ա. Տ. Յարութիւն Սրբազան Արքեպիս. Վեհապետեան	31	քուէ
Բ. Տ. Երեմիա Եպիսկոպոս Տ. Սահակեանց	30	»
Գ. Տ. Առաւաձատուր Եպիս. Տ. Յովհաննէսեանց	24	»
Դ. Տ. Մամբրէ Վարդապետ Մարկոսեան	24	»
Ե. Տ. Սիմէոն Եպիսկոպոս Սերգէրեան	21	»
Զ. Տ. Սահակ Վարդապետ Խապայեան	21	»
Է. Տ. Ղևոնդ Վարդապետ Մաքսուտեան	21	»

Իսկ ԷՐԷՐԷ ԳՈ—ԳՈՒՆ—ԷՐԷ+ԷՆ ԸՆԴԷԼԷՑ պատրաստելու քուէարկութիւնն կատարուեցաւ յաջորդ օրն՝ ի 1-ն Հոկտեմբերի (Նիսան Է) վերոյիշեալց ներկայութեամբ, որով յիշեալ եօթնեքին ընտրե-

լեաց ցուցակին մէջէն միայն երեք անձի վրայ ամփոփեցան. քուէներն և քուէհամարն հետևեալ արդիւնքը ունեցաւ։

Ա. Տ. Յարութիւն Սրբազան Արքեպիսկ. Վեհապետեան 18 ք.
Բ. Տ. Սիմէօն Եպիսկոպոս Սեփէրեան 19 »
Գ. Տ. Երեմիա » Տ. Սահակեանց 16 »
Դ. Տ. Սահակ Վարդապետ Խապայեան 16 »

Այն վերջի երկու ընտրելեաց քուէից հաւասարութեան պատճառաւ՝ վիճակ ձգուելով, Արժ. Սահակ Վարդապետն անցաւ երից ընտրելեաց ցուցակին մէջ։

Գալով յիշեալ եօթնեքին ընտրելեաց հանգամանաց, միաբանական Ընդհ. Ժողովս համառօտիւ կը ներկայացնէ աստ իւրաքանչիւրին վերաբերեալ գլխաւոր տեղեկութիւններն և Ս. Աթոռոյս մէջ վարած պաշտօնները,

Ա.—Ամեն. Տ. Տ. Յարութիւն Ս. Արք-Եպիսկոպոս Վեհապետեան, այժմեան Պատրիարք Կ. Պօլսոյ *)։

Բ.—Տ. Երեմիա Եպիսկոպոս Տ. Սահակեանց Քարբերդցի, Օսմանեան հպատակ՝ 58 տարեկան. Միաբան եղած է 1848 թուականին, Սարկաւագ (1853) և Վարդապետ (1857) ձեռնադրուած է Հոգելոյս Տ. Յովհաննէս Ս. Պատրիարքէն և Եպիսկոպոսութեան աստիճան ընդունած է 1872-ին երջանկայիշատակ Տ. Տ. Գէորգ Դ. Կաթուղիկոսէն. Ս. Աթոռոյս մէջ վարած պաշտօններն են՝ դրագրութիւն 1855—64. ժամասացութիւն 1858—64, Յոպպէի Տեսչութիւն 1864—66, Դարպասընկալութիւն 1866—68 և 1872—75, Նուիրակութիւն ի Ռուսաստան և ի Պարսկաստան 1868—72, Տնտես. Խորհրդոյ անդամակցութիւն 1861—64 և 1875—79 և ներկայ տարեշրջանի սկիզբէն ի վեր կը վարէ Պատր. Փոխանորդութեան պաշտօնը և յետ մահուան Տ. Եսայի Պատրիարքի՝ Պատրիարքական Տեղակալութեան պաշտօնն,

Գ.—Տ. Աստուածատուր Եպիսկ. Տ. Յովհաննէսեանց Քարբերդցի, Օսմանեան հպատակ, 55 տարեկան, Միաբան եղած է 1851

---

*) Վեհապետեան Սրբազանի վարած Ազգ. պաշտօնները թէ ի Կ. Պօլիս և թէ ի Կարին և ի զանազան գաւառս արդէն ծանօթ են. Իսկ Կարնոյ առաջնորդութենէն հրաժարելով՝ 1880ին ի Ս. Աթոռս վերադառնալէն յետոյ 1881էն սկսեալ Պատրիարքական Փոխանորդութեան պաշտօնն վարեց մինչև ցարժանաւոր ընտրութիւն ի Պատրիարքութիւն Կ. Պօլսոյ.

թաւականին, Սարկաւագ (1853) և Վարդապետ (1857) ձեռնադրուած է Հոգելոյս Տ. Յովհաննէս Ս. Պատրիարքէն և Եպիսկոպոսութեան աստիճան ընդունած է 1876ին՝ Երջանկայիշատակ Տ. Տ. Գէորգ Դ. Ս. Կաթուղիկոսէն: Ս. Աթոռոյս մէջ վարած պաշտօններն են՝ Տեսչութիւն ի Վերիտոն 1860-61, ի Յոպպէ 62—64. Ժամարարութիւն 1863—67, մասնաւոր պաշտօն յԱյնթապ, ի Բերիա և յԱտանա 1866ին: Տեսչութիւն կալուածոց ի Գահիրէ 1860—70. Տնտես. Խորհրդոյ անդամակցութիւն 1865—69 և 74—78, Դատական գործոց տեսչութիւն 1874—77. Ընդհ. Ժողովոյ Ատենապետութիւն 1875—76, զոր այժմ ևս կը վարէ ներկայ ատենշրջանի սկզբէն ի վեր:

Գ.—Տ. Մամբրէ Վարդապետ Մարկոսեան Արաբկիրցի՝ Օսմ. Հպատակ, 55 տարեկան, Սարկաւագ և Վարդապետ ձեռնադրուած է 1871ին Հոգելոյս Տ. Եսայի Ս. Պատրիարքէն: Նախ քան եկեղեցական աստիճան ընդունիլն՝ 1857—68 աշխարհական վիճակաւ՝ դասատուութիւն ըրած է Ս. Աթոռոյս մէջ. իսկ յետ վարդապետութեան՝ դասատուութիւն և Ուսումնական Խորհրդոյ անդամակցութիւն 1871—74. Կալուածոց տեսչութիւն ի Գահիրէ 1878—79, Տեսչութիւն ի Դամասկոս 1879—80, և այժմ Նուիրակ է ի Ռուսաստան 1881էն ի վեր. և որուն՝ ներկայ ամի Յունիսի ամսոյն մէջ տրուեցաւ վկայագիր Եպիսկոպոսութեան՝ Միաբանական Ընդհանուր Ժողովէն:

Ե.—Տ. Սիմէօն Եպիսկոպոս Սեֆէրեան Կէյվէցի, Օսմանեան Հպատակ, 58 տարեկան. միաբան եղած է 1850ին, Սարկաւագ (1855) և վարդապետ (1857) ձեռնադրուած է Հոգելոյս Տ. Յովհաննէս Ս. Պատրիարքէն, և Եպիսկոպոսութեան աստիճան ընդունած է 1867ին Երջանկայիշատակ Տ. Տ. Գէորգ Դ. Ս. Կաթուղիկոսէն, որուն ուղեկից եղած էր յանուն Ս. Աթոռոյս Պատրիարքի և Միաբանութեան: Ս. Աթոռոյս մէջ վարած պաշտօններն են՝ շինուածապետութիւն և հանդերձապետութիւն 1855-59, Տեսչութիւն ի Յոպպէ 1859-60. Տնտես. Խորհրդոյ անդամակցութիւն 1861-62 և 72-74, Ընդհ. Ժողովոյ Ատենապետութիւն 1872-74, Պատրիարքական Փոխանորդութիւն ի Կ. Պոլիս 1864-69, այժմ ևս կը վարէ նոյն Փոխանորդութեան պաշտօնն 1874 թուականէն ի վեր, որոյ հետ մէկտեղ վարած է նաև Ազգային զանազան պաշտօններ ի Կ. Պոլիս:

Զ. — Տ. Սահակ Վարդապետ Խապայեան Խարբերդցի, Օսմանեան հպատակ, 36 տարեկան, մտած է յաշակերտութիւն Ժառանգաւորաց Վարժարանին 1867 ին, Սարկաւագ (1869) և Վարդապետ (1877) ձեռնադրուած է Հոգելոյս Տ. Եսայի Ս. Պատրիարքէն։ Ս. Աթոռոյս մէջ վարած պաշտօններն են՝ դասատուութիւն 1871-81, Ուսումնական Խորհրդոյ (1871–74) և դպրոցաց Տեսչութեան (1874—81) անդամակցութիւն, Սիոն ամսաթերթի խմբագրութիւն (1874–78), Տնտես Խորհրդոյ անդամակցութիւն 1878–81, իսկ 1881 էն սկսեալ մինչև ցարդ նուիրակութիւն կընէ ի Ռուսաստան և Ներկայ ամի Մարտ ամսոյն մէջ ընտրեցաւ ի պաշտօն Լուսարարապետութեան, որում՝ Յուլիս ամսոյն մէջ տրուեցաւ նաև վկայագիր Եպիսկոպոսութեան՝ Միաբանական Ընդհանուր Ժողովէն։

Է. — Տ. Ղևոնդ Վարդապետ Մաքսուտեան Դամասկացի, Օսմանեան հպատակ, 35 տարեկան. մտած է յաշակերտութիւն Ժառանգաւորաց Վարժարանին 1868 ին Սարկաւագ (1869) և Վարդապետ (1877) ձեռնադրուած է Հոգելոյս Տ. Եսայի Պատրիարքէն։ Ս. Աթոռոյս մէջ վարած պաշտօններն են՝ Դասատուութիւն 1871—81, Ուսումնական Խորհրդոյ (1871—74) և դպրոցաց Տեսչութեան (1874—81) անդամակցութիւն, Տաճկերէնի գրագրութիւն 1872—74 և 1877—85, Հաշուակալութիւն (78—81) և այժմ կը վարէ Եկեմտից Տեսչութեան պաշտօնը՝ սկսեալ 1881 թուականէն։

Միաբանական Ընդհ. Ժողովս Ներկայիւս մատուցանելով Ձեր Բարձր Սրբազնութեան և Ազգ. Երեսփ. Ժողովոյն՝ իւր ընտրութեան և քուէարկութեան արդիւնքը, հանդերձ կանոնական տեղեկութեամբք, վստահ է որ Ազգ. Երեսփ. Ժողովն կշռելով ներկայ ժամանակիս, Ս. Աթոռոյս տագնապալից վիճակի և ծանրագոյն խնդրոց պահանջքն, կը փութացնէ իւր արժանաւոր և խղճի մտօք ընտրութիւնն՝ ի շինութիւն Ս. Տանս ի փառս Ազգիս սիրեցելոյ։

Ի դիմաց միաբանական Ընդհ. Ժողովոյ Ս. Աթոռոյս

Նախագահ՝ Պատրիարքական Տեղակալ Երեմիա Եպիսկ.

Ատենադպիր՝ Աստուածատուր Եպիսկոպոս.

4 Հոկտեմ. 1885. Երուսաղէմ։